14-րդ շաբաթ

Թեմա՝ «Տարվա ամփոփում և ազատ զրույց»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 րոպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ինչպիսի սպասումներ ունեիք անցնող ուսումնական տարվանից:
2. Ինչպիսի՞ն էր անցնող ուսումնական տարին:
3. Ինչե՞ր եք սովորել անցնող ուսումնական տարում:
4. Ի՞նչն է ձեզ դուր եկել անցնող ուսումնական տարում և կուզեիք՝ շարունակական լիներ:
5. Ի՞նչը ձեզ դուր չի եկել անցնող ուսումնական տարում և կուզեիք փոխել:
6. Ի՞նչ դրական և բացասական տարբերություն եք նկատում նախորդ և անցնող տարվա ուսումնական գործընթացում:
7. Ի՞նչ կուզեիք տեսնել գալիք ուսումնական տարում:
8. Ինչպե՞ս եք անցկացնելու արձակուրդները:
9. Ի՞նչ թեմաներ կուզեիք քննարկել, որոնք այդպես էլ չեն քննարկվել:
10. Տարվա վերջին խոսք՝ ուղղված ձեր կուրսընկերներին և համալսարանին:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

մեծ սպասումներ	ինքնուրույն աշխատանքներ
հետաքրքիր դասեր	դժվարություններ
նոր գիտելիքներ	տրամադրող միջավայր
որակյալ կրթություն	արդյունավետություն
դասախոսներ	ափսոսանքներ
ուսանողներ	ցանկություններ
ընկերական մթնոլորտ	նոր ծրագրեր
ուսումնասիրություններ	առաջարկություններ

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝

Երբ տեղափոխվեցի վեցերորդ դասարան, շատ տպավորված էի: Երբ առաջին մի քանի օրը եկա, անսովոր էր. դասարանները չէինք կարողանում գտնել, իսկ հետո դարձավ սովորական: Նաև ինձ շատ հետաքրքիր էր, թե ինչպե՞ս մեզ կընդունեին ուսուցիչները, ինչ նոր առարկաներ կավելանան:

Արդեն ավարտում ենք վեցերորդ դասարանը և կուզեի ամփոփել իմ կատարած լավագույն աշխատանքները: Նյութերս բաժանել եմ ըստ թեմաների և հիմա կներկայացնեմ:

Այս տարի արել եմ շատ նախագծեր և շատ նյութեր եմ հրապարակել, որոնք վերաբերվում են մայրենիին: Իսկ հիմա եկեք սկսենք…

Ունեմ շատ կարևոր երկու նյութ, որ վերաբերվում է մեր Կրթահամալիրին և սեբաստացիներին:

Նաև բացել եմ մի բլոգ, որտեղ ես և Լալան տեղադրում ենք մեր հորինած հանելուկները: Քանի որ նոր ենք բացել բլոգը դեռ շատ նյութ չենք հասցրել տեղադրել: Ավելացնում ենք, բայց դեռ այսքանն է: Ինձ թվում է, որ հետաքրքիր կլինի:

Ես այս տարի արել եմ մի նախագիծ, որը կոչվում է «Նկարչության հետքերով»: Այդ նախագծով հասցրել եմ հրապարակել ընդամենը երեք նյութ , բայց ամեն ինչ շատ մանրամասն եմ գրել, որպեսզի ձեզ հետաքրքիր լինի:

Նույնպես արել եմ մի նախագիծ, որը կոչվում է «Ուրբաթյա ընթերցումներ»: Իհարկե, ես այդ նախագծի մեջ շատ նյութեր եմ ունեցել, բայց ամենահետաքրքիրը ընտրել եմ հենց այս երկուսը:

Կարծես թե այս տարի շատ ստեղծագործական նյութեր ունեմ և կուզեմ նույնպես ձեզ ներկայացնել: Թեման հիմնականում մարդկանց մասին է:

Նաև այս տարի Նոր Տարվա հետ կապված երկու ստեղծագործկան աշխատանք ունեմ և հիմա կներկայացնեմ:

Գնացել եմ մի ճամփորդության, որից հետո շատ տպավորված էի և երբեք չեմ մոռանա:

Ամփոփելով տարիս՝ պիտի ասեմ, որ այն շատ հաջող ու ստացված եմ համարում:

Աղբյուր՝ mariaabrahamyan.wordpress.com/2019/05/13/իմ-հետաքրքիր-հավես-ուսումնական-տարին/